

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Թեմա՝ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԵՂԻՆԱԿԻ ԵՎ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Առարկա՝	Պատմություն
Ուսուցչուհի՝	Արսինե Ամիրյան
Ղեկավար՝	Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐՈՒ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ I	
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՆՁԻ և ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ	
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	4
ԳԼՈՒԽ II	
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ	
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ.....	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հինգերորդ դարի մեր պատմիչները, բացառությամբ Կորյունի և Եղիշեի, հիշատակում են Ագաթանգեղոսի անունը, որպես Հայոց պատմության առաջին հեղինակի: Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» անգնահատելի աղբյուր է Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքն ուսումնասիրելու համար: Այն միաժամանակ գրական հուշարձան է, որ նշանակալիորեն նպաստել է հայ պատմագրության զարգացմանը:

Ագաթանգեղոսի «Պատմությունը» մի ձոն է՝ նվիրված քրիստոնեությանը, հայ եկեղեցուն, կաթողիկոսությանն ու կաթողիկոսներին:

Աշխատանքի արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում, երբ մեր հարևան երկրներից երկուսը փորձում են յուրացնել մեր «Պատմություն»-ը, մեր պատմիչների աշխատություններում եղած տեղեկությունները իրենց շահերին ի սպաս դնել, այդ աշխատությունները մանրամասն ուսումնասիրելը մեր պարտքն ենք համարում:

Ագաթանգեղոսի «Պատմություն»-ը Հայաստանի Ոսկեդարի երկերից ամենաքննարկվածն ու ամենաուսումնասիրվածն է: Ուսումնասիրվել և ուսումնասիրվում են «Պատմության» բազմալեզու խմբագրությունները: Մինչև օրս հակասական տեսակետներ կան Ագաթանգեղոսի թե՛ անձի, թե՛ «Պատմության» ժամանակի, թե՛ հեղինակի ականատես լինելու մասին:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել «Ագաթանգեղայ պատմութիւն» երկի հեղինակի և խմբագրությունների հարցը:

Խնդիրներն են՝

- անդրադառնալ «Ագաթանգեղայ պատմութիւն» երկի հեղինակի անձի և ժամանակի հարցին,
- ուսումնասիրել «Ագաթանգեղայ պատմութեան» խմբագրությունները՝ որպես պատմական աղբյուր:

ԳԼՈՒԽ I

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՆՁԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հինգերորդ դարի հայ պատմագիրների համաստեղության երկրորդ դեմքը «Ագաթանգեղայ պատմություն» երկի հեղինակն է: «Ագաթանգեղայ պատմութեան» հեղինակի հարցը քննարկվող և բանավեճային է հետազոտողների համար: Ինչպես նշում է Բ. Սարգիսյանը. «Ագաթանգեղոս, որուն ընծայված են նախնինք մեր այս գրուածքս՝ իցէ՞ ստուգիւ լեալ ժամանակակից և ականատես գրիչ այն դիպաց՝ որք կ'աւանդին աստ...»¹:

Հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ չկան, եթե հաշվի չառնենք գրքի առաջաբանում գրված մի քանի ոչ ստույգ տվյալները:

Ագաթանգեղոսի «Պատմության»² գրության ժամանակը դնելով 461-465 թվերին՝ Ստ. Մալխասյանցը նշում է. «Գրիգոր Լուսավորիչը իր վսեմ կերպարանքով, իբրև խոստովանող, իբրև Հայաստանի լուսավորիչ և առաջին կաթողիկոս, առաջին անգամ ստեղծվել է Ագաթանգեղոսի անունը կրող լեգենդար պատմության մեջ, իսկ մինչ այդ, մոտ 180 տարի, նրա անձնավորությունը մնացած է եղել մթության մեջ»³:

«Ագաթանգեղոս» հունարեն բառ է, նշանակում է բարի հրեշտակ, ավետաբեր⁴: Անհայտ բանաքաղը կամ խմբագիրը նպատակ է դրել գրելու բարի ավետողի պատմությունը: Բ. Սարգսյանը «Ագաթանգեղոս» բառը բացատրում է իբրև «բարի աւետիս կամ աւետիք», իսկ «Ագաթանգեղայ պատմությունը»՝ «Պատմութիւն բարի աւետաց» կամ «լավ ևս Աւետարանին»⁵:

Մ. Աբեղյանը կարծում է, որ «Ագաթանգեղոս» բառը սխալ հասկանալով կամ դիտմամբ օգտագործվել է իբրև հատուկ անուն (անկախ նրանից, որ Ագաթանգե-

¹ Սարգիսյան Բ., Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, 1890, Ներածություն, էջ 5:

² Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983:

³ Մուշեղյան Ա., «Ագաթանգեղոսի պատմությունը», ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը և հեղինակի հարցը, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2012, № 1, էջ 196:

⁴ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1942, էջ 44:

⁵ Սարգիսյան Բ., էջ 1:

դոս հատուկ անուն եղել է), և որպեսզի գրքի արժեքը բարձրացվի, հեղինակը հանդես է եկել Տրդատ Գ թագավորի քարտուղարի դերում⁶:

Պատմության առաջաբանում հեղինակը գրում է. «Արդ՝ հրաման է հասել ինձ՝ Ագաթանգեղոսիս, որ մեծ Հռոմ քաղաքից եմ, կրթված հայրենի գիտությամբ, սովորել եմ լատիներենը (հռոմայերեն) ու հունարենը, ուսանել դպրությունը և ոչ խիստ անտեղյակ մնացել նշանագրերի արվեստին: Սրա հետ մեկտեղ եկել եմ Արշակունու արքունիք, քաջ և առաքինի, ուժեղ և պատերազմող Տրդատի տարիներին...»⁷: Այստեղից տեղեկանում ենք, որ հեղինակը Հռոմ քաղաքից է, հմուտ է հայրենի արվեստի մեջ, ստացել է հռոմեական ու հունական կրթություն:

Ըստ Ագաթանգեղոսի տված տեղեկությունների՝ «Պատմություն» գրելու հրաման նրան տվել է հայոց Տրդատ Մեծ արքան. «Արդ՝ ինձ հրաման է հասել Տրդատ մեծ արքայից՝ կարգով գրի առնել ժամանակների դեպքերը...»⁸: Առաջաբանի վերջում հեղինակը գրում է. «Մանավանդ քո հրամանի համար, ով քաջ այր՝ Մեծ Հայքի Տրդատ արքա»⁹: Իսկ Պատմության վերջում գրված է. «Իսկ մենք, երբ ստացանք քո թագավորական հրամանները, ով այրերի մեջ քաջ Տրդատ...»¹⁰:

Հեղինակի այս հավաստումներին ամբողջ միջնադարում ոչ միայն հավատացել են՝ սկսած Ղազար Փարպեցուց և Մովսես Խորենացուց մինչև ուրիշներ, այլև, իբրև ստույգ աղբյուր, օգտագործել են իրենց պատմական երկերը գրելիս և խճճել III դարի առանց այն էլ մութ պատմությունը: Խորենացին նրան անվանում է «...Տրդատի ճարտար քարտուղար Ագաթանգեղոս»¹¹, իսկ Ղազար Փարպեցին՝ «Երանելի այրն Ագաթանգեղոս», և «աստճո երանելի այր սուրբ Ագաթանգեղոս»¹², որ ինքը հայոց հին պատմագիրների մատյանների բազում պատմությունների ծանոթացել է երկար ընթերցանությունից հետո, նրանցում գտել է Հայոց երկրում զանազան ժամանակներում տեղի ունեցած բազմատեսակ իրադարձությունների մասին, որ ստույգ ու անսխալ գրել են առաջին գրողները, և որ դրանց մասին տեղեկացրել է իրեն Ագաթանգեղոսը՝ «ամենայն գիտությամբ և կրթու-

⁶ Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Հ. 1, Երևան, 1944, էջ 161:

⁷ Ագաթանգեղոս, էջ 17:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 23:

¹⁰ Ագաթանգեղոս, էջ 493:

¹¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 215:

¹² Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 9:

թյամբ լի մի մարդ, իր պատմության մեջ ստուգաբան»¹³: Սակայն արդեն XIX դ. սկսած, հայագիտության մեջ մերժվել է «Ագաթանգեղայ պատմութեան» առաջաբանում Ագաթանգեղոս հեղինակի մասին գրվածը և այդ երկը համարվել է ոչ թե IV, այլ V դարի գրվածք: Նման եզրակացության համար բավական հիմքեր կան:

Այս առումով լուրջ քայլ էր Ա. Ֆոն Գուտշմիդի «Ագաթանգեղոս» աշխատության լույս ընծայումը: Նա հայերեն Ագաթանգեղոսը համարում էր բնագիր, իսկ հունարենը՝ թարգմանություն: Դեռևս 1877 թ. Ա. Գուտշմիտը ցույց է տվել, որ Ագաթանգեղոսի գրքի մեջ չկան IV դ. պատմության մասին ուղղակի և ճշգրիտ տեղեկություններ և գտել է, որ այդ գործը ականատեսի գրած չի կարող լինել և որ այն տարբեր գրվածքների հավաքածու է¹⁴: Բ. Սարգսյանը և Հ. Տաշյանը նույնպես գտել են, որ այդ գործը զանազան գրվածքներից կազմված խմբագրություն է, որը կատարվել է V դարում¹⁵:

Չորրորդ դարի հեղինակը, բնական է, չէր կարող օգտվել հինգերորդ դարում գրված գրքից, մինչդեռ ակնհայտ փաստ է, որ «Ագաթանգեղայ պատմութեան» հեղինակը մեծ չափով օգտվել է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկից, բազմաթիվ բառացի հատվածներ է վերցրել ու մեխանիկորեն տեղադրել իր գրքում:

Այս հանգամանքը թույլ է տալիս հետազոտողների մի խմբի ենթադրելու, որ Կորյունն ու Ագաթանգեղոսը մինևույն անձնավորությունն են, իսկ ոմանք էլ կարծել են, թե Ագաթանգեղոսի պատմության բնագիրը հունարեն է եղել և այն թարգմանել է Կորյունը, որ իբր Կորյունն է Ագաթանգեղոսից օգտվել:

Հ. Տաշյանը գտնում է, որ VIII դ. գրված Գեորգ Ասորու թղթի և Ագաթանգեղոսի միջև բնագրային տարբերություններ կան¹⁶: Նա համոզված է, որ Ագաթանգեղոսը խմբագիրն է, որ Կորյունից քաղել է և ոչ ընդհակառակը: Այս խմբագիրը բանաբաղություններ է կատարել նաև այլ աղբյուրներից: Գ. Տեր-Մկրտչյանը գտնում է, որ Կորյունն է Ագաթանգեղոսի «Պատմության» խմբագրողը, իսկ ըստ Ն. Բյուզանդացու, IV դ. հունարեն գրված Ագաթանգեղոսի մատյանը V դ. Կորյունը հայերեն է թարգմանել¹⁷:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Աբեղյան Մ., էջ 165:

¹⁵ Սարգսյան Բ., էջ 5: Տաշեան Յ., Ագաթանգեղոս առ Գեորգեայ Ասորի եպիսկոպոսին, Վիեննա, 1891, էջ 60:

¹⁶ Տաշեան Յ., էջ 89:

¹⁷ Բիւզանդացի Ն., Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տիֆլիս, 1900, էջ 5:

Վերջին տեսակետը, մեր կարծիքով, ավելի հեռու է իրականությունից, քանի որ եթե հետևենք այդ տեսակետին պետք է ենթադրենք, որ Կորյունն է Ագաթանգեղոսից վերցրել և իր պատմության մեջ մտցրել մի շարք հատվածներ: Բայց ուսումնասիրելով Ագաթանգեղոսի «Պատմությունը» և Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն՝ հասկանալի է դառնում, որ Կորյունի մոտ այդ հատվածները տեղին են, ինչը չենք կարող ասել Ագաթանգեղոսի համար:

Ագաթանգեղոսի Պատմության մեջ նկատված կորյունյան հատվածների մեծ մասը բաժին է ընկնում «Դարձ փրկութեան» գրքին, և դա միանգամայն հասկանալի է: Քրիստոնեության տարածումը Հայաստանում Գրիգոր Լուսավորչի ձեռքով և հայոց, վրաց ու աղվանից գրերի ստեղծումն ու տարածումը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով, մեհյանների ու քրմության կործանումը IV դ. սկզբին և պայքարը հեթանոսության մնացորդների դեմ դարավերջին, Ս. Գրիգորի վերադարձը Կեսարիայից՝ աստվածաշնորհ պարգևներով և Մաշտոցի վերադարձը Ասորիքից նորաստեղծ հայերեն նշանագրերով, Տրդատ թագավորի և Ս. Գրիգորի երթը Հռոմ և այլն: Այս բոլոր դրվագները շատ նման են իրար:

Ագաթանգեղոսի մոտ Ս. Գրիգորը և Տրդատ թագավորը գորքի օգնությամբ հալածելով դևերին (քրմերին)՝ կործանեցին Անահիտ և Նանե դիցուհիների մեհյանները Եկեղյաց գավառում, որից հետո «Տրդատ արքան մեծահարուստ իշխանությամբ հրաման տվեց այն կողմերի սատանայակուր և դիվամոլ ազգերին՝ թոթափել ու ազատվել ունայն, հնացած սնտոխապաշտությունից և հնազանդ լինել Քրիստոսի ծառայության ամենահաճելի լծին»¹⁸:

Մ. Աբեղյանը այդ կապակցությամբ միանգամային ճիշտ նկատում է, որ Կորյունի գրվածքի մեջ Ագաթանգեղոսի վերցրած հատվածներն իրենց բնական տեղումն են, իմաստալից կապակցությամբ, իսկական պատմությանը հարմար, մինչդեռ Ագաթանգեղոսի մոտ դրանք հաճախ ոչ համապատասխան տեղերում են դրված, ընդհանրապես անկապ են հաջորդ և նախորդ մասերի նկատմամբ ու հակասող այլ տեղերում ասածներին: Մ. Աբեղյանը նկատում է նաև, որ գրելու ոճն էլ բավական տարբեր է¹⁹:

¹⁸ Ագաթանգեղոս, էջ 125:

¹⁹ Նույն տեղում:

Ն. Ադոնցը ևս կարծում է, որ Ագաթանգեղոսն է օգտվել Կորյունի «Վարք Մաշտոցից»: Սակայն պետք է նշենք, որ Ն. Ադոնցը նաև ասում է, որ «դարձ փրկութեան» մասերը Ագաթանգեղոսի մոտ ավելի ճիշտ տեղում են դրված, քան Կորյունի²⁰:

Հ. Մանանդյանն օտար աղբյուրների տվյալների բաղդատությամբ համոզիչ ձևով ցույց է տվել, որ Ագաթանգեղոսի պատմության մեջ Խոսրով Մեծի և Տրդատ Մեծի մասին պատումները վիպական-բանաստեղծական են և դրանց համար բանաբաղի աղբյուրը հայկական երկրորդ ժողովրդական «Պարսից պատերազմը» վեպն է եղել. «Տաշյանը շատ ճիշտ մատնանշել է, որ վերև բերված Ագաթանգեղոսի պատմվածքները, թեև «ճիշտ և պատմական են», բայց «միին ու հարևանցի» են և նրա մեջ «շատ դեպքեր ի մի են ձուլված»²¹: Այստեղից կարող ենք ենթադրել, որ Ագաթանգեղոսը իր շարադրած դեպքերի ականատեսը չի եղել, ինչպես ինքն է նշում:

Ագաթանգեղոսը, նրան հետևելով նաև Խորենացին և Սեբեոսը, III դ. հիշատակում են միայն երկու հայ թագավոր՝ Խոսրով Մեծ և Տրդատ Մեծ, մինչդեռ այդ դարում իշխել են հինգ հայ թագավոր հետևյալ հաջորդականությամբ՝ Խոսրով Ա, Տրդատ Բ, Արտավազդ, Խոսրով Բ, Տրդատ Գ:

Ագաթանգեղոսը Տրդատ Գ-ին և նրա հորը՝ Խոսրով Բ-ին է վերագրել այն բոլոր դեպքերը, որ իրականում, տեղի են ունեցել Տրդատ Բ-ի ժամանակ, որն իշխել է 216-252 թվականներին:

«Ագաթանգեղայ պատմութիւն» երկի հեղինակը, ժողովրդական վեպի ազդեցության տակ, Տրդատ Ա-ին, Տրդատ Բ-ին և Տրդատ Գ-ին միաձուլել և դարձրել է մեկ անձ՝ Տրդատ Մեծ, որին վերագրել է նաև դեպքեր առաջին երկու Տրդատների ժամանակներից²²:

Որ հեղինակը ժամանակակից չէ, և երկը գրվել է ոչ թե Տրդատ Գ-ի ժամանակ, այլ V դ. 50-ական թվականներին, ակնհայտ երևում է հենց գրքի առաջաբանից: Այնտեղ նշված նավարկողները ոչ այլ ոք էին, եթե ոչ Սահակ-Մաշտոցյան մշակութային շարժման անխոնջ մշակները՝ Սահակն ու Մաշտոցը, Եզնիկն ու

²⁰ Ադոնց Ն., Երկեր, Հ. Բ, Երևան, 2006, էջ 82:

²¹ Մանանդյան Հ., Երկեր, Հ. Բ, Երևան, 1978, էջ 92:

²² Նույն տեղում:

Կորյունը և նրանց շատ գրչակիցներ: «Նրանք էին,- ընդգծում է պատմագիրը,- որոնք կարող էին փառավորել աշխարհին իրենց նահատակության աղոթքներով, ցույց տալ աստծուն հասնելու երկնային ճանապարհների ընթացքը: Նրանք աստծու արքայության ճանապարհների ուղևորներ էին, որ քաջության պտուղների արդյունքը աշխարհին թողեցին: Նրանք բոլորի համար բացել էին մարդասեր Քրիստոսի գրքերի դռները: Նրանք էին բարեխոսությամբ լցնում բոլոր կարոտյալներին»²³:

Եվ ահա հետևելով նրանց՝ «Ազաթանգեղայ պատմութիւն» երկի հեղինակն ինքն էլ էր հանձն առել նավարկել «իմաստության ծովում և մտնել պատմական մատյանների խորության մեջ»²⁴:

«Քրիստոսի գթության դռներն»²⁵ ամենքի առաջ բացողները ոչ այլ ոք էին, եթե ոչ V դ. հայ թարգմանիչները, որոնք և հարստացրին բոլոր «կարոտյալներին»: Քրիստոնեության տարածման պայմաններում ժամանակակիցներին կարոտյալներ չէին կարող անվանել: Կարոտյալները նրանք էին, որոնք ի սրտե ընդունել էին քրիստոնեությունը և ցավում էին իրենց կրոնին V դ. կեսերին ապառնացող վտանգի համար:

Գրքի բովանդակությունը նույնպես վկայում է, որ հեղինակը Տրդատ Գ-ի ժամանակակիցը չէ:

Ժամանակակիցը, թագավորի հրամանով գրողը, երբեք Տրդատի մասին ժողովրդական առասպելներ չէր պատմի ու հանդգնի թագավորին խոզի կերպարանքով ներկայացնել, գերբնական ուժի տեր մարդուն Հռիփսիմե կույսից պարտված ցույց տալ, գազաններին նմանեցնել, չէր վերագրի մտքի ապուշություն, չէր որակի անօրեն և այլն. «Մինչդեռ կառքի վրա նստած թագավորը քաղաքից դուրս էր եկել, իսկույն նրա վրա տիրոջ պատուհասը հասավ, և պիղծ դևը խփելով թագավորին կառքից վայր տապալեց: Անմիջապես սկսեց մոլոզնել ու ինքն իրեն ուտել և բաբելացիների Նաբուգոդոնոսոր արքայի նման մարդկային բնույթից դուրս գալով՝ վայրենի խոզերի կերպարանքով, իբրև նրանցից մեկը գնաց նրանց մեջ բնակվելու: Այնուհետև մտնելով եղեգնուտը խոտաճարակ դարձավ, սաստիկ

²³ Ազաթանգեղոս, էջ 13:

²⁴ Ազաթանգեղոս, էջ 14:

²⁵ Նույն տեղում:

անզգայությամբ դաշտերում կոծելով իր մերկ մարմինը: Թեպետև կամեցան նրան արգելափակել քաղաքում, չկարողացան. նախ բնական ուժի պատճառով և ապա չդիմանալով նրա մեջ մտած դիվական ուժին»²⁶:

Մ. Աբեղյանը ճիշտ է նկատում, որ Գրիգոր Լուսավորչի «տեսիլքի»²⁷ մեջ աղոտ ակնարկված են V դ. կրոնական հալածանքներն ու հավատուրացությունները, որ չէին կարող լինել IV դ., այն էլ դարի սկզբին գրված գրքի մեջ²⁸:

Որ հեղինակը ժամանակակից չէ, վկայում է հենց ինքը Ագաթանգեղոսը: Այսպես, Առաջաբանի XIV հատվածում նա գրում է. «Արդ, մեր այս գրված օրինակի մեջ, ոչ թե հին ավանդություններից տեղեկանալով այս բոլորը կարգով մատենագրել ենք, այլ մենք ինքներս ականատես ենք եղել անձնավորություններին և ներկա՝ հոգևոր գործերին և լուսավոր շնորհապատում վարդապետությանը, ավետարանական հրամանների համաձայն, և թե ինչպես լուսավորել վարդապետությունը, Աստու շնորհիվ, բոլորից վեր դասվեց»²⁹: Իսկ ահա Առաջաբանի XVI հատվածում ասում է. «Ընթեռնելով Ավետարանի աստվածապարզ ավետիսները և կենաց խոսքը մեր Թորգոմյան ազգին և մեր Հայաստան աշխարհում քարոզելու գրվածքը, թե ինչպես կամ ինչպիսի մարդու կողմից ընդունվեց այն կամ ո՛վ էր նա...»³⁰: Այս ամենը հաշվի առնելով՝ Մ. Աբեղյանը գալիս է այն եզրակացության, որ Պատմության մեջ դրված երկար աղոթքներն անգամ պետք է համարվեն պաշտոնական աղբյուրներից հանված, և ոչ մի կասկած չպիտի լիներ այդ գրվածքի ստուգապատում լինելու մասին³¹:

Հեղինակի մասին մի ուրիշ տեսակետ էլ կա: Հավանորեն VII դ. Եզնիկ անունով մի քահանայի թարգմանած՝ հայ կաթողիկոսների և թագավորների ցուցակի մեջ ասված է. «կարգք գործոցն Գրիգորի՝ նորոգեալ արամբ միով երանելեալ Տարանագույ, որում անուն Մասրովպ ճանաչէր»: Պատմության մեջ հեղինակը հիշում է, թե Մ. Գրիգորը չարչարանքի ժամանակ, երբ գլխիվայր կախված էր, մի շատ երկար աղոթք է անում: Ապա՝ ասվում է, թե այդ «գրեցին ու մատու-

²⁶ Նույն տեղում, էջ 123:

²⁷ Նույն տեղում, էջ 421-423:

²⁸ Աբեղյան Մ., էջ 159:

²⁹ Ագաթանգեղոս, էջ 19:

³⁰ Նույն տեղում, էջ 21:

³¹ Աբեղյան Մ., էջ 158:

ցեցին այն թագավորին...»³²: Նույնպես և Հռիփսիմե կույսի աղոթքի մասին պատմելիս՝ ասում է. «այնտեղ գտնվեցին գրագիրներ, որոնք գրեցին ամեն ինչ և ընթերցեցին թագավորի առջև»³³: Ն. Մառը «կարգք գործոց» հասկանալով իբրև «գործերի պատմություն», հայտնում է, թե V դ. առաջ եղել է Ս. Գրիգորի մասին ավանդություն և թե «հայկական ավանդությամբ Մեսրոպին է վերագրվում հունական միսիոներ Ս. Գրիգորի մասին եղած լեգենդի մշակումը: Այսպիսով, Ս. Գրիգոր Լուսավորչի գործերի առաջին ընդարձակած խմբագրությունը պատկանում է, ակնհայտ է, հելլենասեր մատենագիրներին, հատկապես, ըստ ավանդության, Մեսրոպի և նրա աշխատակիցների շրջանին Սահակի գլխավորությամբ»³⁴:

Երկարամյա ուսումնասիրությունների և բնագրերի համեմատության արդյունքում Ա. Մուշեղյանը եկել է այն եզրակացության, որ հայերեն Ագաթանգեղոսի «Պատմություն»-ն իր բառագանձով և ոճագրական դարձվածներով ամենից ավելի սերտ ընդհանրություններ ունի Սահակ Պարթև կաթողիկոսի «Գիր աւանդութեան» սպասահարկության հրահանգի, նրա իսկ հեղինակած Հայ եկեղեցու «Կանոնական Սահմանադրութեան», Կ.Պոլսի Պրոկղ եպիսկոպոսին Սահակի և Մաշտոցի դավանաբանական Թղթերի (431–435 թթ.), Գրիգոր Նազիանզացու ճառերի հայերեն թարգմանության (410–420 թթ.) և այդ շրջանի թարգմանական այլ երկերի հետ³⁵:

Այսպիսով, «Ագաթանգեղայ պատմութեան» հեղինակի վերաբերյալ բոլոր տեսակետները իրենց, քիչ, թե շատ համոզիչ, ապացույցներն ունեն, ինչը բարդացնում է վերջնական որևէ հստակ դիրքորոշում ձևավորելու գործը: Մեր կարծիքով, Պատմության հեղինակը պետք է որ լինի V դ. պատմիչ, ով, IV դ. գրի առնված ավանդապատումները և երկերը աղբյուր ունենալով, ինչպես նաև Կորյունից լայնորեն օգտվելով, հավաքագրել է «Ագաթանգեղայ պատմութիւն»-ը:

³² Ագաթանգեղոս, էջ 69:

³³ Նույն տեղում, էջ 105:

³⁴ Март Н., Крещение армян, грузин, абхазов и аланов Святым Григорием, (арабская версия), Т. 16, Санкт-Петербург, 1905, стр. 174-182.

³⁵ Մուշեղյան Ա., «Ագաթանգեղոսի պատմությունը», ստեղծման հանգամանքները, գրության ժամանակը և հեղինակի հարցը, ՊԲՀ, Երևան, 2012, № 1, էջ 197:

ԳԼՈՒԽ II

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Ագաթանգեղոսի անունով մեզ հասած «Պատմություն»-ը հայ հին գրական հուշարձանների մեջ բացառիկ է այն առումով, որ արդեն միջնադարում, միջագային ճանաչում գտնելով, թարգմանվել է մի շարք լեզուներով: Գիրքն ուներ երկու հիմնական՝ միմյանցից էապես տարբեր խմբագրություն. այսպես կոչված «Գրիգորի վարքը», որի հայերեն սկզբնագիրը չի պահպանվել, և «Պատմությունը»³⁶:

Ագաթանգեղոսի «Պատմություն»-ը ոչ միայն կանոնականացվել է հայկական եկեղեցու կողմից, այլև լայն տարածում է գտել քրիստոնեական աշխարհում, թարգմանվելով տարբեր լեզուների՝ VI-VII դդ. հունարենի, հունարենից՝ արաբերենի (կան տարբեր խմբագրություններ), իսկ արաբերենից՝ եթովպերենի: Գոյություն ունի և հունարենից սերող մի համառոտ լատիներեն Վարք:

Ագաթանգեղոսի բազմալեզու խմբագրությունների էությունը պարզաբանելու հարցում մեզ կարող են օգնել մի կողմից Ագաթանգեղոսի «Պատմության» նյութերի հետքերը հայ պատմագրության էջերում, իսկ մյուս կողմից՝ Ագաթանգեղոսի նորանոր խմբագրությունները:

Ագաթանգեղոսի «Պատմության» նյութերը ամենից շատ սփռված ենք գտնում Մովսես Խորենացու «Պատմության» էջերում: Խորենացին հստակ կերպով նշում է, որ ինքը բազում տեղեկություններ է քաղել Ագաթանգեղոսից: Նրա երկրորդ գրքի ԿԷ գլխից մինչև այդ գրքի վերջը առատորեն ցրված են Ագաթանգեղոսից քաղած տեղեկությունները:

Մովսես Խորենացին Ագաթանգեղոսին հիշում է իր երկրորդ գրքի վեց գլուխների վերջում: Այս գլուխներից չորսի մեջ հստակ կերպով հիշում է Ագաթանգեղոսին որպես աղբյուր: Մյուս երկու գլուխներից մեկում նա ընթերցողին հիշեցնում է, որ այդ նյութի մասին լրացուցիչ տեղեկություններ քաղելու համար

³⁶Թովիչյան Ա., Ագաթանգեղոսի Պատմության Վիեննայի Կրկնագիր ձեռագիրը, ՊԲՀ, Երևան, 2005, № 2, էջ 144:

կարող ենք դիմել Ազաթանգեղոսին, իսկ մի գլխի վերջում էլ, ուր խոսվում է Տրդատի գործունեության մասին (նախքան նրա թագավոր դառնալը), հիշեցնում է, որ Տրդատի թագավորության շրջանի տեղեկությունների համար կարելի է դիմել Ազաթանգեղոսին:³⁷

Ազաթանգեղոսի և Մովսես Խորենացու առնչության հարցերը վաղուց են գրավել բանասերների ուշադրությունը: Դրանք ուսումնասիրվել են Մովսես Խորենացու աղբյուրների քննարկման առթիվ և այդ մասին տարբեր կարծիքներ են հայտվել:

Ազաթանգեղոսի «Պատմության» խմբագրությունները (արաբերեն Վարք, հունարեն Վարք, Օքրիդայի Վարք և Քարշունի Վարք) ցույց են տալիս, որ Մ. Տեր-Մովսիսյանը, Կոնիբերը և ուրիշ հետազոտողներ իզուր չեն ենթադրում, որ Մովսես Խորենացու մոտ Ազաթանգեղոսի անունով պահպանված, բայց Ազաթանգեղոսի մեզ հասած «Պատմության» մեջ պակասող տեղեկությունները իրոք ծագում են Ազաթանգեղոսից և պատմահոր հնարանքները չեն³⁸:

Հայագիտության մեջ մեծ նորություն էր 1902թ. Ն. Մառի կողմից հայտնաբերված Ազաթանգեղոսի արաբական խմբագրությունը, որի համեմատությունը մեզ հայտնի բնագրի հետ բացահայտորեն ցույց տվեց, որ թեև նյութը հիմնականում նույնն է, այսուհանդերձ խմբագրությունն անկախ է և ինքնուրույն³⁹:

Ն. Մառի հայտնաբերած Սինայի (Եգիպտոս) Ս. Կատարինե վանքի ձեռագիրը պարունակում է մի քանի երկեր, որոնց մեջ առաջինը արաբերեն Վարքն է: Ձեռագիրը սկզբից ու վերջից պակաս է, և արաբական խմբագրությունը զբաղեցնում է 1ա-35բ էջերը: Գրված է մագաղաթի վրա ու թեև անթվական է, բայց ըստ գրչագրական հատկանիշների՝ X դարից ավելի ուշ չէ: Ձեռագիրը պարունակում է Ազաթանգեղոսի պատմության հետևյալ նյութերը՝ Գրիգորի վկայաբանության մի մասը, Հռիփսիմյանց վկայաբանությունը, Գրիգորի քարոզն ու տեսիլքը, Վար-

³⁷ Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ազաթանգեղոսի խմբագրությունների հարցը ըստ Խորենացու տվյալների, ՊԲՀ, Երևան, 1975, № 4, էջ 129:

³⁸ Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ազաթանգեղոսի խմբագրությունների հարցը ըստ Խորենացու տվյալների, էջ 132:

³⁹ Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ազաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, ՊԲՀ, Երևան, 1973, № 1, էջ 209:

դաստիարակչությունից մի փոքրիկ մասսա և Դարձի պատմությունը: Արաբական այս թարգմանության ժամանակը Ն. Մառը որոշում IX դ.⁴⁰:

Հրատարակելով այս արաբերեն բնագիրը ռուսերեն թարգմանությամբ՝ Ն. Մառը նույն գրքում տվել է մի արժեքավոր ուսումնասիրություն, ուր Ագաթանգեղոսի պատմության հետ կապված բանասիրական հարցեր է լուծել: Հենվելով այս նոր խմբագրության վրա՝ Ն. Մառը կարողացավ հաստատ կերպով ցույց տալ, որ մեզ հայտնի Ագաթանգեղոսի «Պատմություն»-ից բացի եղել է մեկ այլ խմբագրություն⁴¹:

Ն. Մառի ենթադրությունը հունական խմբագրության գոյության մասին հաստատվեց, երբ 1946թ. Ժ. Գարիտը հրատարակեց էսկուրիալի (Իսպանիա) մատենադարանում իր հայտնաբերած հունարեն խմբագրությունը: Դա գտնվում է 1107թ. կրող մագաղաթյա ձեռագրում: Նորահայտ ձեռագիրը պարունակում էր Գրիգորի վկայաբանությունից սկսած Ագաթանգեղոսի բոլոր մնացած հատվածները: Համեմատելով արաբերեն Վարքը հունականի հետ՝ Ժ. Գարիտը գտնում է, որ արաբականն իր որոշ մասերով (մանավանդ Դարձի պատմությունը) ուղղակի այս հունական խմբագրությունից է թարգմանված⁴²:

Այսպիսով, բանասիրության մեջ գոյացավ մի նախնական պատկեր Ագաթանգեղոսի այս անհայտ խմբագրության մասին (Վարք), որի հայերեն բնագիրը դեռ հայտնի չէ, բայց կային հունարեն և արաբերեն թարգմանությունները և լուրջ ուսումնասիրության նյութ էին դարձել:

Շուտով հայտնաբերվեցին նաև ձեռագրեր, որոնք այս Վարք կոչված խմբագրությանն են առնչվում: Այսպիսով, արդեն հայնաբերված է չորս բնագիր (երկուսը հունարեն, երկուսը արաբերեն), որոնք մեկ ընդհանուր շրջանակի մեջ են մտնում, բայց ոչ մեկը մյուսի հետ ամբողջովին չի համընկնում, իսկ ամենից առաջ հայտնաբերվածը՝ արաբերեն Վարքի բնագիրը, մնում է պակասավոր:

Արաբերեն Վարքի ամբողջական ձեռագիրն ունի 400 թերթ: Նրա պարունակած նյութերը կարելի է երեք մասի բաժանել: Առաջին մասը ճառեր կամ Քարոզներ են տարբեր հեղինակներից: Ապա գալիս է երկու վարք, որոնցից առաջի-

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Жамкочян А.С., Житие св. Григория Просветителя Армении по арабской синайской рукописи 455, Ереван—Москва, 2009, стр. 7.

⁴² Նույն տեղում, էջ 210:

նը Գրիգոր Լուսավորչինն է (արաբերեն Վարք): Ձեռագրի երրորդ մասը Աստվածաշնչից որոշ մասեր է պարունակում:

Արաբերեն Վարքի էջերի համեմատությունը հայերեն խմբագրության և արաբերեն Վարքի հետ ցույց է տալիս նրա մերձակցությունը հայկականին: Հունականից նա բոլորովին հեռու է, թեպետև հայկականի հետ չի նույնանում: Այսուհանդերձ, երբ համեմատում ենք արաբերեն Վարքի այս էջերը արաբերեն թարգմանության հետ, տեսնում ենք, որ նրանից նույնպես բոլորովին հեռու է իր բառապաշարով ու ոճով:

Բացի Ազաթանգեղոսի արաբերեն խմբագրությունից կա նաև վրացերեն թարգմանություն:

Հռիփսիմյանց վկայաբանության վրացերեն տեքստի գոյության մասին անդրանիկ տեղեկություն հրապարակվեց ձեռագրերի նկարագրության առիթով. Թեյմուրազ արքայազնը 1835 թ. կազմում է իր ձեռագրական հավաքածուի նկարագրությունը և մեկ օրինակ տրամադրում ակադ. Մ. Բրոսեին: Վերջինս 1838 թ. թարգմանաբար հրատարակում է այդ ցուցակը՝ հավատարիմ մնալով բնագրին: Ի թիվս այլ ձեռագրերի, այստեղ ներկայացվում է և մի «Վարք սրբոց», ուր կա նաև մեզ հետաքրքրող վկայաբանությունը: Հետագայում, պրոֆ. Դ. Չուբինաշվիլու գրադարանն ու հավաքածուն ուսումնասիրելիս, Ա. Ցազարելին գտնում է Թեյմուրազի նկարագրության մեկ օրինակ ևս, ուր, բնականաբար, ներկայացված է «Հռիփսեմյանց վկայաբանությունը»⁴³:

Վրացերեն թարգմանությունը, դժբախտաբար, չունի այնպիսի հիշատակարան կամ հիշատակագրություն, որից տեղեկություններ քաղելիք թարգմանության ժամանակի մասին: Դատելով Ռ. Բլեյկի հայտնաբերած պատառիկի գրության ժամանակից, կարելի է ընդհանուր ձևով միայն ասել, թե թարգմանությունը կատարված է XI դ. առաջ, որովհետև պատառիկը այդ դարի գրչությունն է: Պատառիկի քննությամբ երկու անգամ ի մասնավորի զբաղված պրոֆ. Ժ. Գարիտը ևս նշյալ սահմանագծումից բացի որևէ թվագրության փորձ չի անում: Պրոֆ. Ի. Աբուլաձեն կարծում է, որ այն կատարված պետք է լինի VIII դ. հետո, ելակետ ունենալով ակադ. Ն. Մառի և Իվ. Ջավախիշվիլու այն տեսակետը, թե հայերեն

⁴³ Մուրադյան Պ.Մ., Ազաթանգեղոսի Պատմության մի հատվածի հին վրացերեն թարգմանությունը, ՊԲՀ, Երևան, 1972, № 1, էջ 63:

ազգային խմբագրությունը գոյացել է VIII դ., իսկ քանի որ վրացերենը հիմնականում հետևում է հայերեն խմբագրությանը, ուրեմն թարգմանվել է նրա գոյացումից հետո միայն⁴⁴:

Թերևս առանձին ու մենադրական բնույթի ուսումնասիրությամբ հնարավոր լինի ապագայում լուծել հայերեն խմբագրության ձևավորման ժամանակի հարցը: Պարզ է, սակայն, որ այսօրվա բնագիրը անհնար է նույնացնել ավանդականորոն V դ. համարվող Ագաթանգեղոսի հետ: Հունարեն, արաբերեն և վրացերեն խմբագրությունների գոյության փաստը ինքնին կասկածելի է դարձնում ավանդական տեսակետը⁴⁵:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հայերեն բնագրի և նրան առնչվող բազում հարցերի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունի նրա հունարեն թարգմանության բնագիրը:

1973 թ. Լուվենում լույս է տեսնում հունարեն Ագաթանգեղոսի վաղուց սպասված քննական բնագիրը՝ պատրաստված Գի Լաֆոնտենի կողմից:

Հիմք ընդունելով Ագաթանգեղոսի հայերեն բնագիրը՝ Լաֆոնտենը աշխատության չորրորդ գլխում ձեռագրերի բանասիրական մանրագնին համեմատություն է կատարում որոշելու համար, թե որ հատվածում, որ ձեռագիրը ավելի հարազատ է հայկական բնագրին:

Գրքի վերջում գրված է հունարեն քննական բնագիրը (էջ 173-345), որն սկզբում ունի Լավրենտյան օրինակում գտնվող առաջաբանը⁴⁶: Հունարեն տեքստում առավել մանրամասն ներկայացված է Արտաշիրի պատմությունը, նրա կողմից բարձրացված ապստամբությունը: Այս տեղեկությունները պահպանվել են XII դ. մատենագրություններում⁴⁷:

Ագաթանգեղոսի «Պատմության» հունարեն թարգմանության քննական հրատարակության ընդարձակ առաջաբանից տեղեկանում ենք, որ այն բովանդակող ձեռագրերը տասներկուսն են գրված է VIII-XII դդ., մինչդեռ մետափրաստյան խմբագրությունը՝ հունական Հայսմավուրքի համար X դարի Սիմեոն

⁴⁴ Նույն տեղում, էջ 70:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ագաթանգեղոսի հայերեն մատյանի հունարեն հին թարգմանությունը, էջ 279:

⁴⁷ Чунакова О. М., Отголоски "Деяний Ардашира Папакана" в древнеармянской литературе, Ленинград, 1980, стр. 197.

Մետափրաստեսի կազմած համառոտագրությունը, ներկայացված է 99 ձեռագրով, ինչը վկայում է, որ X դ. վերջինիս հայտնվելուց հետո «Պատմության» երկարաշունչ բնագիրը եզակի դեպքերում է ուշադրության արժանացել:

Հունարեն թարգմանության գլխավոր տարբերությունը հայերեն «Պատմություն»-ից նրանում Ագաթանգեղոսի երկի կեսը կազմող Վարդապետության իսպառ բացակայությունն է: Միայն Լավրենտիսյան ձեռագրում ներկայացված առաջաբանը հայերեն առաջաբանի շատ սեղմ վերապատման է: Քանի որ ձեռագրերից մեկը VIII դ. կրկնագիր է, և արդեն VIII դ. երկրորդ կեսում թարգմանությունից մեջբերում է արել Նիկեփոս պատրիարքը, ապա այն թվագրվում է VI-VIII դդ. միջև⁴⁸:

Լավրենտյան ձեռագրի առաջին ինը պարբերություններն ընդգրկում են առաջաբանի համառոտ տարբերակը, հայերեն բնագրում և արաբերեն թարգմանության մեջ բացակայող՝ պարթևների չորս տերություններին վերաբերող հատվածը և Արտաշիրի ու Արտավանի վեպը, որի բովանդակությունը արտացոլված է X դ. մետափրաստյան խմբագրության մեջ⁴⁹:

Քննելով հունարենով ներկայացված վեպի և իրանական «Կարնամակ-ի Արտաշիր-ի Բաբական» երկի (որ բանավոր ծագում ունի և գրի է առնվել VI-VII դդ.) ընդհանրություններն ու տարբերությունները, Կ. Մելիք-Օհանջանյանը եկել է այն եզրակացության, որ Ագաթանգեղոսի մոտ գործ ունենք իրանական վիպական ցիկլի հայկական տարբերակի հետ՝ հայկական գաղափարական գունավորումով, և հետևաբար, խնդրո առարկա հատվածը եղել է հայկական բնագրի նախնական խմբագրության մեջ: Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին նույնպես ծանոթ են եղել վեպին, սակայն Ագաթանգեղոսից անկախ⁵⁰: Մելիք-Օհանջանյանի այս տեսակետն ամփոփված ենք գտնում Մ. Աբեղյանի «Հայ հին գրականության պատմության» մեջ, որն այդ հատվածը վերապատմում է հայկական «Պարսից պատերազմը» վեպի «Խոսքով և Տրդատ» երկի կամ զրույցի կազմում⁵¹:

⁴⁸ Մուրադյան Գ., Արտաշիրի վիպական հատվածն Ագաթանգեղոսի բնագրերում, Աշտանակ, շ. II, Երևան, 1998, էջ 46:

⁴⁹ Նույն տեղում, էջ 47:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Աբեղյան Մ., էջ 165:

Կ. Մելիք-Օհանջանյանի այն տեսակետին, որ հունարենով պահպանված վիպական հատվածը եղել է հայերեն Ագաթանգեղոսի նախնական բնագրի մաս, հակառակ տեսակետ է հայտնել Ժ. Գարիտը՝ հունարեն Վարքին նվիրված իր գրքում: Ի տարբերություն Գուտշմիդի՝ լեզվական փաստերի վրա հիմնված այն ենթադրության, որ դա պետք է թարգմանչի հավելումը լինի, Գարիտը համարում է, որ այն ավելի ուշ է կցվել հունարեն Ագաթանգեղոսին և հետևաբար, երբեք հայերեն «Պատմության» մաս չի կազմել: Նրա փաստարկներից կարևորներն են Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու՝ Ագաթանգեղոսի բուն «Պատմության» սկզբի համարյա բառացի վերարտադրությունը, որ բավական համոզիչ է թվում, և լեզվական առանձնահատկությունները: Ըստ Գարիտի, հատվածի հունարենը «Պատմության» լեզվի համեմատ այնքան գիտական ու արհեստական չէ: Առանց հատուկ մատնանշելու հատվածի՝ հայերենից թարգմանված լինելու աներկբայելի հանգամանքը, սակայն համեմատելով նրա լեզուն հունարեն Վարքի լեզվի հետ՝ Գարիտը մատնացույց է արել դրանցում առկա զուգահեռ հայկաբանություններ:

Վիպական հատվածի և «Պատմության» հունարեն թարգմանության լեզվական տարբերության մասին խոսելիս՝ Գարիտը նշել է միայն Խոսրով անվան տարբեր արտացոլումները նրանցում: Մյուս կողմից, մարազնին ուսումնասիրելով Վարքի լեզվում առկա հայկաբանությունները (էջ 246-259), նա դրանցից շատերի համար զուգահեռներ է բերել հենց «Պատմության» թարգմանությունից⁵²:

Վիպական հատվածի և «Պատմության» հունարեն թարգմանության լեզվական տարբերությունները վկայում են, որ խնդրո առարկա բնագիրը, լինելով հայերենից թարգմանություն, թարգմանվել է տարբեր անձանց ձեռքով:

Այս եզրակացությունը և Ժ. Գարիտի բավական համոզիչ ենթադրությունն այն մասին, թե Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին պետք է որ Ագաթանգեղոսի մատյանը կարդացած լինեին առանց վիպական հատվածի, ինչպես նաև VI դ. Պետրոս Սյունեցուն այն ծանոթ լինելու վարկածի քիչ հիմնավորվածությունը հակասում են Կ. Մելիք-Օհանջանյանի և Մ. Աբեղյանի պնդմանը, որ խնդրո առարկա այուժեն, լինելով իրանական վիպական ցիկլի հայկական տարբերակը

⁵² Նույն տեղում, էջ 50:

և, առավել ևս, մաս կազմելով հայկական «Պարսից պատերազմ» վեպի, եղել է Ագաթանգեղոսի «Պատմության» նախնական խմբագրության մեջ: Ն. Ակինյանը փորձել է բացատրել այդ հակասությունը՝ հեռուն գնացող հետևություններ անելով Շ. Գարիտի այն դրույթից, թե հատվածի լեզուն մոտ է Վարքի լեզվին: Սակայն նրա եզրակացությունն այն մասին, որ հատվածի հեղինակը Գրիգոր Լուսավորչի վարքի հայ խմբագիրն է եղել, իսկ «Պատմություն»-ը կցած անձանոթ ձեռքը հատվածը գտել էր հունարեն վարքի մեջ՝ իմանալով, որ կապակցություն ունի Ագաթանգեղոսի գրվածքի հետ, կարող է բռնազբոսիկ թվալ, և չի լուծում վերոհիշյալ հակասությունը⁵³:

Արաբերեն և հունարեն Վարքերը, ինչպես նաև 1935թ. հրատարակված Օքրիդայի Վարքը, որպես Ագաթանգեղոսի խմբագրությունների մի ուրույն խումբ, բանասիրական շատ հարցեր լուծեցին, որոնցից մեկն է Խորենացու՝ Ագաթանգեղոսին վերագրված տեղեկությունների ճշմարտացիությունը:

Այս ասպարեզում վերջին նորությունը մեզ տվեց, այսպես կոչված, Քարշունի Վարքը, որ լույս տեսավ 1971թ.:

Այս ամենը գտնում ենք նաև Քարշունի Վարքում: Գրիգորի մահվանից հետո հովիվները նրան թաղեցին, ապա Զենոն կայսեր ժամանակ Արմա (Գառնիկ) անունով մի ճգնավորի տեսիլքի միջոցով հայտնվեց, որ գնա Դարանաղի ու թաղի Գրիգորին: Ճգնավորը նրա նշխարքները բերեց Թորդան, ուր նրա վրա տաճար կառուցվեց⁵⁴:

Ագաթանգեղոսի «Պատմության» խմբագրությունները մեզ թույլ են տալիս պատկերացում կազմել մի շարք դեպքերի մասին, որոնց մասին Ագաթանգեղոսի կողմից շարադրված բնագրի նյութերը չեն պահպանել:

⁵³ Նույն տեղում, էջ 51:

⁵⁴ Մ. Խորենացի, էջ 203:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ի մի բերելով կատարած աշխատանքի արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ.

- «Ազաթանգեղայ պատմութիւն» երկը հավաքագրվել է V դարում: «Պատմության» հեղինակը երկում նշում է իր՝ դեպքերին ժամանակակից լինելու փաստը: Թե ով է եղել երկի հեղինակը, դժվար է ասել: Եթե Ազաթանգեղոսը իսկապես եղել է ակա-նատես և գրել է իր տեսածն ու լսածը, նրա մոտ պետք է, որ IV դ. տեղի ունեցած իրադարձությունները առավել մանրամասն լինեին: Ժամանակակից հեղինակը, ով, ինչպես ինքն է նշում, «Պատմություն» գրելու հրաման ստացել է Տրդատ Գ-ից, չէր կարող իր պատվիրատուի և արքայի մասին գրել այն ամենը, ինչը նա շատ մանրամասն ներկայացրել է իր «Պատմություն» մեջ: «Պատմություն» V դ. գրված լի-նելու մասին է խոսում նաև նրանում Կորյունի «Վարք Մաշտոցից» ընդօրինակված հատվածները: Եթե անգամ «Պատմություն»-ը կամ դրա որոշ հատվածներ գրվել են IV դ., ժամանակակցի կողմից, երկը հավաքագրվել, խմբագրվել է V դ.: Այստե-ղից էլ կարելի է ենթադրել, թե ինչու են «Պատմության» մեջ տեղ գտել V դ. վերա-բերող և Կորյունի «Վարք Մաշտոց»-ից վերցրած հատվածները:
- «Ազաթանգեղայ պատմութիւն» երկը գրի է առնվել անհայտ բանաբաղի կամ խմբա-գրի կողմից: Այս մասին է խոսում առաջին հերթին երկի՝ «Ազաթանգեղայ պատ-մութիւն» կոչվելը: Ինչպես գիտենք, Ազաթանգեղոս բառը նշանակում է *բարի հրեշ-տակ, ավետաբեր*: Ուստի մենք կարող ենք ենթադրել, որ «Ազաթանգեղայ պատմու-թիւն» նշանակում է ոչ թե Ազաթանգեղոս պատմիչի գրած «Պատմություն»-ը, այլ բարի հրեշտակի, ավետաբերի «Պատմություն»-ը: Հաշվի առնելով «Պատմության» բովանդակությունը՝ պետք է նշենք, որ այդ բարի հրեշտակը Գրիգոր Լուսավորիչն է: Այսպիսով, երկի վերնագիրը հուշում է, որ սա Գրիգոր Լուսավորչի վարքն է: Իսկ այն, որ բանաբաղը իրեն անվանում է Ազաթանգեղոս «Պատմության» մեջ և նշում է իր՝ դեպքերին ժամանակակից լինելու փաստը, պարզապես իր գրածը ավելի վստա-հելի դարձնելու համար է արել:
- «Ազաթանգեղայ պատմութիւն» երկը թարգմանվել է տարբեր լեզուներով, ունի մի շարք խմբագրություններ: Իր բնույթով քրիստոնեությանը նվիրված երկ է: Այն ամ-բողջությամբ վերցրած քրիստոնեական սրբերից մեկի՝ Գրիգոր Լուսավորչի վար-

քագրությունն է: Երկը կարևոր տեղեկություններ է պարունակում քրիստոնեության՝ որպես պետական կրոն, առաջին անգամ ընդունելու մասին: Ահա թե ինչու է այդքան մեծ ուշադրություն հատկացվել «Ագաթանգեղայ պատմութեան»-ը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Աղբյուրներ

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, 551 էջ:
2. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, 177 էջ:
3. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, 537 էջ:
4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, 426 էջ:

բ) և մենագրություններ

5. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1944, 647 էջ:
6. Աղոնց Ն., Երկեր, հ. Բ, Երևան, 2006, 674 էջ:
7. Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, 639 էջ:
8. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1942, 384 էջ:
9. Բիզանդացի Ն., Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տիֆլիս, 1900, 554 էջ:
10. Զարպիանալեան Հ.Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դար), Բարձրագոյն դպրոցաց համար, Վենետիկ-Սբ. Ղազար, 1897, 822 էջ:
11. Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, Երևան, 1978, 647 էջ:
12. Սարգիսյան Բ., Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, 1890, 447 էջ:
13. Սուրբ Գրիգորի վարդապետությունը, Էջմիածին, 2007, 138 էջ:
14. Տաշեան Յ., Ագաթանգեղոս առ Գեորգեայ Ասորի եպիսկոպոսին, Վիեննա, 1891, 164 էջ:
15. Жамкочян А.С., Житие св. Григория Просветителя Армении по арабской синайской рукописи 455, изд. НАН РА-РАН, Ереван—Москва, 2009, 27 стр.
16. Марр Н., Крещение армян, грузин, абхазов и аланов Святым Григорием, (арабская версия), т. 16, Санкт-Петербург, 1905, 612 стр.

գ) Հոդվածներ

17. Թովփյան Ա., Ագաթանգեղոսի Պատմության Վիեննայի կրկնագիր ձեռագիրը, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2005, № 2, 144-153 էջ:
18. Խաչատրյան Պ.Մ., Մի առեղծված Ագաթանգեղոսի Պատմության առաջաբանում, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1990, № 1, 77-83 էջ:
19. Մուշեղյան Ա.Վ., Կորյուն թե՛ Ագաթանգեղոս: Բնագրերի քննություն նոր տեսանկյունից, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1996, № 2, 49-64 էջ:
20. Մուրադյան Պ.Մ., Ագաթանգեղոսի Պատմութեան հնագույն պատառիկներ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1971, № 12, 37- 48 էջ:
21. Մուրադյան Պ.Մ., Ագաթանգեղոսի «Պատմության» մի հատվածի հին վրացերեն թարգմանությունը («Հռիփսիմյանց վկայաբանությունը»), Երևան, Պատմաբանասիրական հանդես, 1972, № 1, 63-76 էջ:
22. Մուրադյան Գ., Արտաշիրի և Արտավանի վեպը Ագաթանգեղոսի մատյանում, Արևելագիտական հանդես, Երևան, 1994, № 3, 30-32 էջ:
23. Մուրադյան Գ., Արտաշիրի վիպական հատվածն Ագաթանգեղոսի բնագրերում, Աշտանակ, հ. II, Երևան, 1998, 46-55 էջ:
24. Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, թարգմանություն և ծանոթագրություններ Ռ.Թոմսոնի, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1976, № 4, 240-242 էջ:
25. Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Վարդապետություն Ս. Գրիգորի, Մի վաղ հայկական վարդապետարան, թարգմանություն և ծանոթություններ Ռոբերտ Վ. Թոմսոնի («Հարվարդի հայկական բնագրեր և ուսումնասիրություններ»,3), Քեմբրիջ, Մասաչուսեթս, Պատմաբանասիրական հանդես, 1970, № 2, 266-267 էջ:
26. Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ագաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1973, № 1, 209-237 էջ:
27. Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ագաթանգեղոսի խմբագրությունների հարցը ըստ Խորենացու տվյալների, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1975, № 4, 129-139 էջ:
28. Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ագաթանգեղոսի հայերեն մատյանի հունարեն հին թարգմանությունը, քննական բնագիր, աշխատասիրությամբ Գի Լաֆոնտենի, Լուվեն, 1973, 278-280 էջ:

29. Տեր-Ղևոնդյան Ա.Ն., Ազաթանգեղոսի մի նոր բնագիր, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1973, № 2, 303-304 էջ:
30. Акопян П.А., Ващева И.Ю., Знаковые персонажи в «Истории Армении» Агатангелоса (Григорий и Трдат), Вестник Нижегородского университета, Нижний Новгород, 2012, стр. 209-213 стр.
31. Чунакова О.М., Отголоски «Деяний Ардашира Папакана» В древноармянской литературе, "Историко-филологический журнал", Ленинград, 1980, № 4, 196-207 էջ:
32. Muradyan G., Topchyan A., The Romance of Artaban and Artasir in Agathangelos' History, Yerevan, 2008, 9 p.